Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆրանսիայի Հանրապետություն (Լիոն), 2019 թվական, հունվարի 15-17

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալության կողմից կազմակերպված քաղցկեղի սքրինինգի վերաբերյալ աշխատաժողովին:

Հիմնական նպատակն ուղղված էր քաղցկեղի սքրինինգների իրականացման, դրանց դրական և բացասական կողմերի, սքրինինգային ծրագրերի որակի ապահովման խնդիրների, քաղցկեղի սքրինինգային ծրագրերի իրականացման քաղաքական որոշումների ընդուման հարցերի քննարկմանը:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված են մասնակցելու ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի անդամ-պետությունների, միջազգային կառույցների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ:

Հանդիպմանը քննարկվեցին առավել տարածված քաղցկեղների՝ կրծքագեղձի, արգանդի պարանոցի (HPV, ՊԱՊ թեստ), վահանաձև գեղձի, ստամոքսի, կոլոռեկտալ և թոքի քաղցկեղների կանխարգելմանն ուղղված սքրինինգային հետազոտությունների իրականացման մարտահրավերները, վերջիններիս օգտակար և վնասակար ազդեցությունները, ինչպես նաև արդյունավետությունը՝ այդ թվում ծախսարդյունավետությունը, քաղցկեղի ռեգիստրների և տվյալների հավաքագրման կարևորությունը: Ներկայացվեցին որոշ երկրների (Բելառուս, Ղազախստան և այլն) քաղցկեղի կանխարգելմանն ուղղված սքրինինգային ծրագերի օրինակները, Արևելյան Եվրոպայում քաղցկեղների կանխարգելմանն ուղղված սքրինինգային հետազոտությունների առանձնահատկությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Քաղցկեղի տարբեր տեսակների սքրինինգի իրականացման վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության նկատառումներով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը:

Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը:

Քննարկումների հիմնական առարկաներից էր նաև առավել կանխարգելելի քաղցկեղների դեպքում սքրինինգների իրականացման նպատակահարմարության դիտարկումը երկրի համատեքստում, քաղաքական որոշումների ընդունումն առկա ռեսուրսների և առաջնահերթությունների շրջանակում:

Այցի ընթացքում, օգտվելով ընձեռված հնարավորությունից, Լիոնում ՀՀ հյուպատոսության օժանդակությամբ, հանդիպում կայացավ նաև Լիոնի փոխքաղաքապետ, մասնագիտությամբ բժիշկ Գևորգ Քեփենեկյանի հետ: Քննարկվեցին առողջապահության ոլորտում Լիոն քաղաքի հետ երկկողմ համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովին ներկայացվեցին երկրների դրական փորձը, միջազգային փորձագետների, հեղինակավոր մասնագետների կարծիքներն ու առաջարկները քաղցկեղի սքրինինգային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների, այդ թվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալության ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները, ներառյալ սքրինինգային ծրագրերի իրականացման բոլոր փուլերը՝ վաղ հայտնաբերում, ախտորոշում, բուժում և հիվանդների վարում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը քաղցկեղի տարբեր տեսակների սքրինինգային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Առողաջապահության համաշխարհային կազմակերպության և Քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալության ներկայացուցիչների 2019 թվականի ապրիլին Հայաստան նախատեսվող այցի շրջանակներում քննարկել վերոնշյալ հարցերի շրջանակը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

2019թ. հունվարի 21

X _____